Ք. Երևան 29.12.2025թ.

«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողով

/Յուրիկ Օհանյանի կողմից հնարավոր վարքագծի վերաբերյալ կանոնների խախտման դեպքում կարգապահական վարույթ հարուցելու ընթացքում կատարված քննության արդյունքների մասին/

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հանձնաժողովը, մասնակցությամբ՝ հանձնաժողովի նախագահ՝ Արման Սարգսյանի, հանձնաժողովի անդամներ՝ Արմենակ Ադամյանի, Լուսինե Սարգսյանի և Հարություն Գևորգյանի, քննարկելով «Հայէկոնոբանկ» ԲԲԸ-ի /այսուհետ՝ Բանկ/ գործադիր տնօրեն՝ Ա. Առաքելյանի 15.08.2025թ.-ի թիվ 09.3-66344 դիմումը՝ ներկայացված ՀՀ արդարադատության նախարար՝ Ս. Գալյանին պարզեց, որ Բանկի կողմից, ի լրումն նշված դիմումի, 20.08.2025թ.-ին ներկայացվել է թիվ 09.3-66/346 դիմում: Նշված դիմումը ՀՀ արդարադատության նախարարության վերահսկողության վարչության պետի պարտականությունները ժամանակավոր կատարող Մ. Ալավերդյանը իր 15.09.2025թ.-ի թիվ 28.2/40538-2025 դիմումով՝ ուղղված «ՍԳԿԿ» ԻԿ-ի տնօրեն Ա. Ելինյանին, խնդրել է պարզել կառավարիչի վարքագծի կանոնների խախտման հնարավոր առկայությունը: Հանձնաժողովը, ուսումնասիրելով ներկայացված դիմումը, եկել է այն եզրակացության, որ ներկայացված դիմումի առնչությամբ՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 27.3 հոդվածի 1-ին մասի 3-րդ ենթակետի և նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ մասերով սահմանված նորմերով կառավարիչի նկատմամբ պետք է հարուցվի կարգապահական վարույթ: Կառավարիչի կողմից վարքագծի վերաբերյալ կանոնների հնարավոր խախտումը պարզելու նպատակով 17.10.2025թ., 07.11.2025թ. և 18.11.2025թ.-ին նշանակվել են կարգապահական հանձնաժողովի նիստեր:

Իսկ 18.11.2025թ.-ին նշանակված նիստին ներկա էին հանձնաժողովի նախագահ՝ Արման Սարգսյանը, հանձնաժողովի անդամներ՝ Լուսինե Սարգսյանը, Հարություն Գևորգյանը և Արմենակ Ադամյանը, ինչպես նաև դիմումատուի ներկայացուցիչ՝ Ալբերտ Արզումանյանը: Հանձնաժողովը փաստում է այն հանգամանքը, որ չնայած նրան, որ կարգապահական հանձնաժողովի նախագահի ծանուցմամբ՝ Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի 3.4 կետի համաձայն՝ կառավարիչին պարտավորեցվել է մինչև լսումների օրվա նախորդող երեք օրը ներկայացնել առարկություններ կամ դիրքորոշում ներկայացված բողոք դիմումին, սակայն ինչպես կառավարչի, այնպես էլ ներկայացուցիչի կողմից այն չի ներկայացվել:

Հանձնաժողովի նախագահ՝ Արման Սարգսյանը նիստի մասնակիցներին հայտնեց, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 27.3 հոդվածի և կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի 4.2 կետի հիմքով նիստի անցկացման քվորումը ապահովված է, և կարող են սկսել դիմումի քննարկումը:

Նախ Ա. Սարգսյանը առաջարկեց դիմումի քննարկման նպատակով սահմանել հետևյալ հերթականությունը. նախ առաջարկեց լսել դիմումատուին, իսկ այնուհետև լսել կառավարչի ներկայացուցիչին, իսկ այնուհետև հարցերի դեպքում դրանք ուղղել ինչպես դիմումատուին, այնպես էլ կառավարչին: Այնուհետև՝ լսելով կողմերին և հետազոտելով վարույթում առկա նյութերը՝ հանձնաժողովը անցնի կարծիքների արտահայտմանը և այդ կարծիքներից ելնելով՝ կայացնի որոշում կարգապահական տույժ կիրառելու կամ այն

կարճելու վերաբերյալ: Հանձնաժողովի անդամների կողմից նշված առաջարկը ընդունվեց միաձայն:

Դիմումատուի կողմից հանձնաժողովին ներկայացվեց դիմումը, որով դիմումատուն նշել է, որ ի լրումն Բանկի 15.08.2025թ. թիվ 09.3-66/344 գրությանը՝ Բանկը ցանկացել է նաև տեղեկացնել, որ Բանկի տիրապետության տակ է հայտնվել նաև «Ուստր Մամիկոն» ՍՊԸ-ի /ի դեմս՝ վերջինիս տնօրեն Սարգիս Մնացականյանի/ և «Գենեռալ Խան» ՍՊԸ-ի միջև 10.07.2025թ. կնքված տարածքի օգտագործման թույլտվության և պահատվության պայմանագիրը, որով «Ուստր Մամիկոն» ՍՊԸ-ն թույլատրել է «Գենեռալ Խան» ՍՊԸ-ին օգտագործել ք. Երևան, Հրազդանի կիրճ 79, 89 եւ 89/1 հասցեներում գտնվող անշարժ գույքերը: Նշված պայմանագիրը կնքելիս «Ուստր Մամիկոն» ՍՊԸ-ն հանդես է եկել ի դեմս տնօրենի, ով գործել է կանոնադրության և սնանկության կառավարիչ Յուրիկ Օհանյանի համաձայնությամբ:

Իր գրությամբ բանկը նշել է, որ ՀՀ սնանկության դատարանի 31.10.2022թ. որոշմամբ սկսվել է «Ուստր Մամիկոն» ՍՊ ընկերության լուծարման վարույթ, որի շրջանակներում դատարանի նույն որոշմամբ կասեցվել է «Ուստր Մամիկոն» ՍՊ ընկերության գործունեությունը, ինչպես նաև ընկերության՝ գույքը կառավարելու և տնօրինելու բոլոր իրավունքները: Բանկը իր դիմումում մատնանշել է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի և նույն օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, ինչից, ըստ բանկի, պարզ է դառնում, որ սնանկության կառավարիչը գույքը կառավարելու համաձայնություն է տվել մի ընկերությանը, որի գույք կառավարելու իրավունքները կասեցված են դեռևս 2022 թվականից: Նման համաձայնությունը միգուցե կարող է տրվել մինչև լուծարման մասին որոշում կայացնելը, սակայն ինչպես ակնհայտորեն բխում է վերը նշված իրավական նորմի պահանջից, Պարտապանին պատկանող գույքի տնօրինումը նրա լուծարման մասին որոշում կայացնելուց հետո իրականացնում է կառավարիչը, այսինքն՝ լուծարումից հետո սնանկության կառավարիչը չէր կարող և չպետք է տար գույքի կառավարման որևէ համաձայնություն՝ չունենալով նման իրավասություն:

Իր դիմումով բանկը հայտնել է, որ վերը նշված պայմանագրում հղում է տրված թիվ ՎԴ/3731/05/20 վարչական գործով 30.06.2020 թ. հայցի ապահովման որոշմանը: Բանկը հայտնել է նաև, որ այդ որոշմամբ թեկուզ սնանկ ճանաչված ընկերությունը ձեռք է բերել որոշակի իրավունքներ, սակայն, ի թիվս այլնի, նաև այդ իրավունքները կասեցվել են ՀՀ սնանկության դատարանի 31.10.2022թ. որոշմամբ: Նման պայմաններում, ըստ բանկի, սնանկ ճանաչված ընկերությունը և սնանկ ճանաչված ընկերության սնանկության կառավարիչը որևէ կերպ իրավասու չէր կառավարելու՝ տվյալ դեպքում օգտագործման և պահատվության հանձնելու նշված գույքերը:

Այսպիսով՝ բանկը հայտնել է, որ ստացվում է, որ բավարար չէ, որ սնանկ ճանաչված եւ լուծարման վարույթում գտնվող ընկերությունը, ում գույք կառավարելու և տնօրինելու իրավունքները կասեցված են, ինքնուրույն՝ ի դեմս տնօրենի, կնքել է պայմանագիր, նաև վերջինիս սնանկության գործով կառավարիչը տվել է այդ գործարքին համաձայնություն՝ որևէ իրավական նորմով չունենալով լուծարման վարույթ սկսվելուց հետո նման համաձայնություն տալու իրավասություն:

Իր բանավոր հայտարարության ժամանակ բանկի ներկայացուցիչը պնդեց բանկի կողմից ներկայացված դիմումը:

Ինչպես արդեն նշվել է, սույն արձանագրության մեջ կառավարչի կողմից պատասխան չի ներկայացվել, իսկ ինչ վերաբերվում է կառավարչի ներկայացուցչի միջնորդությանը, ապա վերջինս, հիմք ընդունելով Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի 4.9 կետի պահանջները, պնդեց, որ վարույթը ենթակա է կարճման:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կարգապահական հանձնաժողովը նախ արձանագրում է այն փաստը, որ հանձնաժողովը կարող է անդրադառնալ դիմումում նշված միայն այն հանգամանքներին, որոնք ապացուցվում են դիմում ներկայացնողի և կառավարչի կողմից ներկայացված փաստաթղթերով, դիմումներով և ապացույցներով: Հանձնաժողովը չի կարող անդրադառնալ այն հանգամանքներին, որոնք հիմնված են լոկ հայտարարությունների վրա, որոնք կատարված են առանց համապատասխան փաստական և իրավական հիմքերի: Նախ հարկ է նշել, որ երբ հանձնաժողովը անդրադառնում է կառավարչի կողմից կատարված սխալ և /կամ/ ոչ իրավաչափ գործողությունների դիտավորությանը, հանձնաժողովը կարող է անդրադառնալ միայն կառավարչի կողմից կատարված այն գործողություններին, որոնք կառավարիչը ակնհայտորեն իմացել է կամ պարտավոր էր իմանալ, քանի որ այդ պարտականությունները և պարտավորությունները կառավարչի մասնագիտական պարտադիր իմացություններն են:

Կարգապահական հանձնաժողովը ընդունելով այն հանգամանքը, որ 10.07.2025 թ.-ին «Ուստր մամիկոն» ՍՊԸ-ի և «Գենեռալ Խան» ՍՊԸ-ի միջև կնքված տարածքի օգտագործման **թույլտվության** և պահատվության պայմանագիրը առոչինչ պայմանագիր է և որևէ իրավական հետևանք չի առաջացնում, այդուհանդերձ անհրաժեշտ է համարում հանձնաժողովը անդրադառնալ այդ պայմանագրի կնքման շրջանակներում կառավարիչի գործողությունների կատարման օրինաչափությանը: Հանձնաժողովը անդրադառնում է այն փաստական հանգամանքներին, թե կառավարիչի կողմից կատարված գործողությունների ընթացքում արդյո՞ք կառավարիչը գիտակցել է կամ կարող էր կամ պետք է գիտակցեր իր կողմից կատարված գործողությունները, թե ոչ:

Կարգապահական հանձնաժողովի անդամները, վերլուծելով դիմումատուի կողմից ներկայացված փաստաթղթերը և կատարված հայտարարությունը, պարզեցին, որ ՀՀ սնանկության դատարանի 18.11.2019 թ.-ի թիվ ՍՆԴ1/1410/04/19 որոշմամբ հաստատվել է «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ի 3199378.20 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով պահանջը, և բանկին թույլատրվել է արտադատական կարգով իրացնել բանկում որպես գրավի առարկա հանդիսացող ք. Երևան, Հրազդանի կիրճ 79, ք. Երևան, Հրազդանի կիրճ 89 և Հրազդանի կիրճ 89/1 հասցեների տակ գտնվող գույքերը: Նշված որոշման հիման վրա՝ վերը նշված գույքերի սեփականության իրավունքը գրանցվել է համապատասխանաբար՝ 10.04.2020 թ., 07.04.2020 թ. և 07.04.2020 թ., իսկ համապատասխանաբար՝ 03.02.2021 թ., 03.02.2021 թ. և 29.02.2021 թ. վերը նշված գուքերը սեփականության իրավունքով գրանցվել են «Վեռսալ» ՍՊԸ-ի անվամբ:

Սակայն հարկ է նշել, որ 10.07.2025 թ.-ին «Ուստր Մամիկոն» ՍՊԸ-ի /որի անունից հանդես է եկել տնօրեն՝ Ա. Մնացականյանը/ և «Գենեռալ Խան» ՍՊԸ-ի միջև կնքվել տարածքի օգտագործման **թույլտվության** և պահատվության պայմանագիր, որի 1.1 կետով թույլատրողը, այսինքն՝ «Ուստր Մամիկոն» ՍՊԸ-ն 3.1 կետով սահմանված վճարի դիմաց թույլատրում է օգտագործել ք. Երևան, Հրազդանի կիրճ 79, 89 և 89/1 հասցեներում գտնվող անշարժ գույքերը:

Այսինքն՝ պարտապան՝ «Ուստր Մամիկոն» ՍՊԸ-ի և «Գեներալ Խան» ՍՊԸ-ի միջև 10.07.2025 թ.-ին կնքված տարածքի օգտագործման թույլտվության և պահատվության պայմանագիրը կնքվել է արդեն իսկ այն ժամանակ, երբ այդ գույքերը չէին պատկանում պարտապան ընկերությանը և չէին մտնում «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի հիմքով պարտապանի սնանկության ծավալի մեջ:

Հանձնաժողովը փաստում է այն հանգանամանքը, որ նախ կոնկրետ դեպքում պարտապան ընկերության տնօրենը ստորագրել է այնպիսի պայմանագիր, որի իրավասությունները արդեն իսկ դադարել էին դեռ ՀՀ սնանկության դատարանի կողմից 31.10.2022թ.-ին կայացված թիվ ՍՆԴ1/1410/04/19 որոշմամբ, այն է՝ նշված որոշմամբ կասեցվել էին պարտապանի գույքը կառավարելու կամ տնօրինելու պարտապանի բոլոր իրավունքները: Հանձնաժողովը փաստում է նաև այն հանգամանքը, որ պարտապան ընկերության տնօրենը

չէր կարող ստորագրել նման պայմանագիր՝ անկախ նրանից, թե կային արդյո՞ք ցանկացած տիպի այլ իրավական կամ դատական ակտեր, թե ոչ, այն էլ այնպիսի դատական ակտեր, որոնք կայացվել էին ՀՀ սնանկության դատարանի 31.10.2022 թ.-ին օրինական ուժ ստացած որոշումից հետո: Բացի այդ պետք է փաստել նաև այն հանգամանքը, որ պայմանագիրը կնքվել է այն ժամանակ, երբ պայմանագրի 1.1. կետով որպես օգտագործմանն հանձնման ենթակա գույքերը պարտապանի գույքային կազմի մեջ չէին մտնում դեռ 10.04.2020 թ., 07.04.2020 թ. և 07.04.2020 թ.-ից: Միաժամանակ, հանձնաժողովը փաստում է, որ 10.07.2025 թ.-ին կնքված տարածքի օգտագործման թույլտվության և պահատվության պայմանագրի 3.1. կետով սահմանվել է, որ օգտագործողը /«Գենեռալ Խան» ՍՊԸ-ն/ «Ուստր Մամիկոն» ՍՊԸ-ին յուրաքանչյուր ամիս պետք է վճարի 300000 ՀՀ դրամ: Հարկ է նշել, որ պայմանագրում նշված չէ, թե նշված գումարը ո՞ր հաշվարկային հաշվին է ենթակա փոխանցման, և փոխանցման դեպքում, ու՞մ տիրապետմանն է ենթակա այդ գումարը, չնայած այն հանգամանքին, որ պարտապանի լուծարային վարույթում առաջացած բոլոր դրամական միջոցները ենթակա են ուղղման միայն պարտապանի սնանկության հատուկ հաշվին, ինչը «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի իմպերատիվ պահանջ է:

Նշված փաստական հանգամանքներին հանձնաժողովը անդրադառնում է միայն այն պատճառով, որ դրանք իր գործողությունների կատարման ընթացքում պետք է ուշադրության արժանանային նաև սնանկության գործով կառավարչի կողմից, որոնք հստակ կարգավորված են «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ, 47-րդ, 70-րդ և 71-րդ հոդվածներով և որոնց խախտումը հանգեցնում է ինչպես նաև սնանկության գործով կառավարչի վարքագծի Կանոնագրքով սահմանված կանոնների խախտմանը: Նման պայմաններում կառավարիչը պետք է և պարտավոր էր իմանալ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի վերը նշված նորմերը և պարտավոր էր գիտակցել այն պարզ հանգամանքը, որ վերջինս չէր կարող հանդիսանալ որպես պայմանագրի կողմ, որում որպես գույքի հանձնող հանդիսանում է իր իրավասությունները դադարեցված անձը և դեռ ավելին՝ նշված գույքը չէր մտնում պարտապանի գույքի կազմի մեջ: Էլ ավելի անհասկանալի և օրենքից դուրս է կառավարիչի այն գործողությունները, որ կառավարիչը պետք է քաջ գիտակցեր, որ պարտապան ընկերությունը, լուծարային գործընթացում գտնվելով, չի կարող կնքել դրամական միջոցներին վերաբերվող ցանկացած տիպի պայմանագիր, որն էլ հաստատվի իր կողմից:

Անկախ ամեն ինչից նման պայմաններում կարող են առաջանալ բազմաթիվ հարցեր կապված հարկային մարմինների հետ, մասնավորապես՝ արդյո՞ք նշված պայմանագիրը հաշվետվությամբ արտացոլվել է, թե ոչ, և արդյո՞ք այդ պայմանագրով առաջացած գումարներից հարկ հաշվարկվել է, թե ոչ և այլն: Այսինքն՝ համադրելով այս բոլոր փաստական հանգամանքները՝ կարելի է եզրակացնել, որ վերը նշված օրենքով սահմանված բոլոր գործողությունները կառավարիչը պետք է և պարտավոր էր իմանալ, քանի որ այդ օրենքով նախատեսված գործողությունները ուղղակիորեն անմիջական կապ ունեն կառավարիչի ճիշտ և անկողմնակալ գործողությունների հետ: Իսկ հակառակ դեպքում նման գործողություններով կառավարիչը խախտել է իր մասնագիտական վարքագծի կանոնները :

Ինչ վերաբերում է կառավարչի ներկայացուցիչ՝ Ալբերտ Արզումանյանի միջնորդությանը այն մասին, որ Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի 4.9 կետի պահանջների հիմքով կարգապահական վարույթը ենթակա է կարճման, ապա հանձնաժողովը արձանագրում է այն հանգամանքը, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 27.3 հոդվածի 7-րդ և 8-րդ մասերի համաձայն՝ կարգապահական վարույթն իրականացվում է եռամսյա ժամկետում, և բացառիկ դեպքերում կարգապահական վարույթի ժամկետը կարգապահական վարույթ հարուցած մարմնի որոշմամբ կարող է երկարաձգվել ոչ ավելի, քան երեք ամսով, իսկ փորձաքննություն նշանակվելու դեպքում՝ փորձաքննության կատարման

համար անհրաժեշտ ժամկետով: Նման պայմաններում անհրաժեշտ է մատնանշել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 2-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերի, ինչպես նաև նույն օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, այն է՝ սույն օրենքով սահմանված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերին վերաբերող օրենսդրական տեխնիկայի, նորմատիվ իրավական ակտի կառուցվածքի, նորմատիվ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու, նորմատիվ իրավական ակտերի գործողությունը դադարեցնելու, ժամկետների հաշվարկման վերաբերյալ դրույթների գործողությունը տարածվում է անհատական և ներքին իրավական ակտերի վրա, եթե այլ բան սահմանված չէ օրենքով կամ այն նորմատիվ իրավական ակտով, որով նախատեսվել է անհատական կամ ներքին իրավական ակտի ընդունում /1-ին հոդվածի 2-րդ մաս /, 5) **անհատական իրավական ակտ**՝ նորմատիվ իրավական ակտի հիման վրա և դրան համապատասխան ընդունված զրավոր իրավական ակտ, որը սահմանում է վարքագծի կանոն կամ առաջացնում է փաստական հետևանքներ և վերաբերում է միայն դրանում անհատապես նշված անձի կամ անձանց, 6) **ներքին (լոկալ) իրավական ակտ**՝ նորմատիվ իրավական ակտի հիման վրա և դրան համապատասխան ընդունված իրավական ակտ, որը սահմանում է վարքագծի կանոն այն անձանց խմբի համար, որոնք դա ընդունող մարմնի հետ աշխատանքային, քաղաքացիաիրավական կամ վարչական հարաբերությունների մեջ են կամ օգտվում են դա ընդունող մարմնի ծառայություններից կամ աշխատանքներից /2-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետեր / և Նորմատիվ իրավական ակտը չպետք է հակասի հավասար կամ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերին 9-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները: Համադրելով կառավարչի ներկայացուցչի կողմից ներկայացված միջնորդությունը և միջնորդությունը հիմնավորող կարգի և վերը նշված օրենսդրական նորմերի պահանջները՝ հանձնաժողովը եկավ այն եզրակացության, որ միջնորդությունը ենթակա է մերժման:

Հանձնաժողովը արձանագրում է, որ կարգապահական հանձնաժողովը ինքնակարգավորվող կազմակերպության կանոնադրությամբ, ինչպես նաև կանոններով կամ սահմանված կարգերով վերահսկում է անդամների գործունեության համապատասխանությունը «Սնանկության մասին» ՀՀ օրենքին, ինքնակարգավորվող կազմակերպության կանոնադրությանը, կանոններին, կարգերին և խախտում թույլ տված անձանց նկատմամբ հարուցում է կարգապահական վարույթ և կիրառում համապատասխան տույժեր:

Միաժամանակ հանձնաժողովի բոլոր անդամները, ուսումնասիրելով վարույթին տրամադրված նյութերը, ինչպես նաև բողոք ներկայացված անձի և կառավարչի ներկայացուցիչի կողմից կատարված հայտարարությունը, եկան այն եզրակացության, որ կառավարչի կողմից կատարվել են սույն արձանագրության մեջ նշված կանոնների կոպիտ խախտումներ, կառավարիչը չի նպաստել կառավարիչների նկատմամբ վստահության ձևավորմանը, և միաձայն քվեարկեցին սնանկության գործով կառավարիչ՝ Յուրիկ Օհանյանի նկատմամբ կիրառել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 27.2-րդ հոդվածով նախատեսված կարգապահական տույժ՝ նկատողություն

Ա. Սարգսյան

Ա. Ադամյան

Լ. Սարգսյան

Հ. Գևորգյան